տօնէից քննութեան սէյտս ունի, եթէ արժան իցէ՝ քննեալ որոշեսցեն։

Փոխանորդն Հայոց. Շինուածքն 'ի դմբեթին և արտաքոյ նորին ամենեքեան գրեալ են 'ի հրովարտակս և համաձայն են Հէօճմէթիս, այլ Ցոյնք բողոքեն ընդդէմ նոցին. երկաթն յերեսս արտաքին դրան չունի տարբերութիւն 'ի փայտէ, բաւական է որ միայն դուռ է, և ամրութիւն նորին է սակս պահպանութեան և զգուշութեան ներքին կարասեաց։ Հայկական արձանագրութիւնն ուսեալ եմք 'ի Ցունաց. զի 'ի նորոգութեան տաճարին Ս. Ցարութեան լցին յամենայն ուխտաւորեալս Ցունական արձանագրութեամբ. Հայոց երեք տող արձանագրութիւնն նորոգութեան տեղւոյն չունի վնաս ումեք, լուսցարանն 'ի սէյտս ուխտաւորաց և այլոց է, քարեայ սանդուխքն սակս ելանելոյ 'ի վերին սենեակս յակամայից շինեալ, կանթեղք տախտակամած ձեղուան յիշեալ է 'ի հրովարտակին, պատկերն 'ի վերայ դրան դմբեթին՝ մին 'ի սպասուց պատարագին է. կրկնայարկ սենեակն լուսարարին, ներքինն 'ի պատսպարել զկահս և զկարասիս, եւ վերինն ննջարան նորին։ Սենեակքն 'ի վերայ ճիթահանին, արտաքոյ է դաւթին և ոչ ումեք վնաս։

Յետ այնորիկ պաշտօնեայք և երեսփոխանք համահամ հաւանութեամբ 'ի միասին քննեցին զտեղիսն, բաղդատելով ընդ հրովարտակս և ընդ Հէօճմէթս, և յերիս մասունս որոշեցին։

Մասն Առաջին՝ համաձայն հրովարտակի և Հէօճմէթից։

Հայք ունին հրաման պատարագելոյ 'ի ներքոյ դմբեթին եւ կատարել զպաշտամունս, ուստի հարկ է ունել զսպասս։ Սեղանն 'ի ներքոյ դմբեթին, կանթեղք, պատկեր, աշտանակ, սփռոց, սոքա անհրաժեշտ են 'ի ժամ պատարագի ըստ օրինաց իւրեանց։

Նորոգութիւն արտաքին դրան, ծեփ որմոց դաւթին. նորոգութիւն հին ջրամբարին 'ի կողմն հարաւոյ. սալիւ յարդարել զդաւթն։

Մասն Երկրորդ արտաքոյ հրովարտակին և համաձայն Հէօճմէթից։

Սեփհականել Հայոց զբանալի արտաքին դրան. Սա-